

կալոյ, ի հնձանէ եւ ի ձիթոյ» (Թէոփ. 282): Ասոցմէ արմտիքն է որ Մաշտոցին մէջ «հատ պատարագի» կը կոչուի, սկըսեալ Վենետկոյ ԺԱ դարու հնագոյն օրինակէն. եւ զոր նոյն «հատ» բառով կը յիշեն Մանդակունին (210) ու Խոսրով անձեւացին եւս (Հյպտ. 290). եւ Տաթեւացին՝ «հատ պատարագի մարտիրոսաց» (Հրց. 362), յորում զգալի է այս ձօնին առիթն ալ: Հրէիցմէ զատ՝ սոյն նիւթերէն աստուածոց կ'ընծայէին նաեւ Եգիպտացիք (Վիգ. Ե, 1312), Յոյնք եւ Հռովմայեցիք (Գար. Դ, 962-3. 973-4), եւ բոլոր ազգերը, սկսեալ նախամարդոյն անդրանկէն (Մննդ. Գ, 3):

Հարկ չկար մտեղէնն ու միւսները միշտ միասին նուիրելու կամ ուտելու. անճոխք կրնային լոկ արմտեօք ալ ճաշ տալ: Ասոր համար յիշեալ Մաշտոցն յատուկ կանոն մ'ունի սեղանի օրհնութեան, զոր պիտի տեսնենք քիչ յետոյ, եւ յորում կը խնդրուի օրհնել «զհատս զայս եւ զգինիս», ու միս չկայ: Մշակի մը տուած պարզուկ ազապը տեսնելու չենք հոգ:

Տ. - Օրհնութիւն: — Ա. կը տարբերէր հասարակ սեղանօրհնէից կանոնէն՝ թէ մեր եւ թէ միւս քրիստոնէից քով (Կարբ. Ա, 834-5): Հայոց մէջ կրկին